

Քիւ 26868
Ապրիլ 26, 1979

Հոգեշնորհ
Տ. Սուրեն Վրդ. Չինչինեան
Հովիւ Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գեղվիլ.

Սիրելի Հայր Սուրեն,

Ապրիլ 22ին ստացանք Փետրուար 5, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած համայնքիդ Ժիական Ժո-
ղովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի երեք տեղամոց ընտրութիւնը, եւ ներ-
կայացնելով բուժարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման
պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ
ստորեւ արուած ցանկին:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ, համաձայն Քեմական Կանոնադրու-
թեան, Ժիական Խորհուրդի նոր կազմի դիւանի ընտրութիւնը կը կատարուի Առաջնոր-
դին կողմէ ընտրութիւնները վաւերացուելէն ետք:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Ժողովի անենագրութիւնը, եւ ներ-
կայեալ տեղեկագիրները՝ գտնոնք ստորագրել տալէ ետք:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր գաշտօնակից-
ներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան աւրի մը, ի պայծառութիւն մեր Ս.
Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ՅՈՐԳՈՍ ԱՐԺԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Հրանդ Նորսիկեան
Ըան Լիբ
Ալեքս Գեորգեան

Ցունիս 6, 1979

Հոգեշնորհ
Տ. Սուրեն Վրդ. Չինչինեան
Հովիւ Ս. Շիրակաթ Եկեղեցւոյ
Պէլվիւ.

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է 1025.00 -- հազար
քսանըփնգ-- տուարի գումարը՝ ձեր համայնքին կողմէ
հանգանակուած Լիբանանի Հայոց Օգնութեան Հիմնադրամին
ի նպաստ:

Նորին Սրբազնութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտ-
նէ ազգօգուտ այս հանգանակութեան բերած համայնքիդ մաս-
նակցութեան համար, եւ կը գնահատէ այդ ուղղութեամբ ծխա-
կան Խորհուրդիդ կատարած աշխատանքը:

Հաճեցէք ներքակ գտնել Առաջնորդարանի թիւ 82970 ստա-
ցականը:

Առողջութեան եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներով,

Խորին յարգանք


Սիրան Փալվեցեան
Վարիչ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

P.O. BOX 1187 + 400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-233-9453

VERY REV. SOOREN CHINCHINIAN, PASTOR



Հոկտեմբեր 14, 1979

Բարձրաշնորհ՝
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի
Նիւ-Եորք.

Սիրելի Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ստացայ Ձերդ Սրբազնութեան 17 Սեպտեմբեր 1979, թրւակիր նամակը որով կը հաղորդէիք թէ կարելիութիւնը պիտի չունենայիք մեր համայնքը այցելել 1980 Մարտ 23-ի շաբաթավերջէն առաջ, մեր եկեղեցւոյ Օծման առաջին տարեդարձի հանդիսութեանց նախագահելու համար:

Մեր եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը իր վերջին նիստին ընթացքին այն եզրակացութեան յանգեցաւ որ 1980 Մարտ 23-ի շաբաթավերջը շատ ուշ պիտի ըլլայ, եւ որոշեց Դեկտեմբեր 2-ը որպէս Օծման հանդիսութեանց թուական:

Ցաւ կը զգանք որ առիթը պիտի չունենանք Ձերդ Սրբազնութեան ներկայութիւնը ապահովել մեր եկեղեցիոյ Օծման առաջին տարեդարձի հանդիսութեանց առթիւ:

Թերեւս անհրաժեշտ էր աւելի կանուխ շփման մէջ մտնել Ձերդ Սրբազնութեան հետ այս հարցին առնչութեամբ:

Կը յայտնեմ իմ բարեմաղթութիւնները եւ կը մատչիմ ի համբոյր Ձերդ Սրբազնութեան Ս. աջոյն:

Խոնարհ աղօթակից
Սուրեն Արք. Ձինչիեան

Քիւ 26782

Փետրուար 25, 1980

Հոգեշնորհ

Տ. Սուրեն Վրդ. Չինչինեան
Հովիւ Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գեւորդի.

Սիրելի Հայր Սուրեն,

Թեմական Խորհուրդի Փետրուար 22 նիստին մէջ նկատի առինք ձեր համայնքի Թեմական տուրքերու յեռնեալ պարտքը եւ որոշեցինք որ Ժիական Ժողովի կառարած ընտրութիւնները պիտի վաւերացանք միայն՝ եթէ Առաջնորդարան փոխանցէր համայնքիդ յեռնեալ պարտքին կէսը եւ խոստանար վաւերացումէն ետք, երկու ամսուան ընթացքին, վճարել մնացեալ գումարը:

Համեցէք այս պարագան լրջօրէն նկատի առնել եւ անմիջապէս ընթացք առլ անոր:

Ձեզի եւ Ժիական Խորհուրդիդ անդամներուն կը ցանկանք բաշտողջութիւն եւ եկեղեցանուէր ձեր բարի գործերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՅԳԵՍԿՈՐՈՍ

Առաջնորդ

ԹԻԼ 26760

Մարտ 18, 1980

Հոգեշնորհ

Տ. Սուրեն Վրդ. Չինչինեան
Հովիւ Ս. Եղեղեղեղ Սկեղեղեղ
Նախագահ Ժական Խորհուրդի
Գէլվիլ.

Սիրելի Հայր Սուրեն,

Մարտ 10ին ստացանք համայնքի ժական ժողովի առեղեկագիրները: Փետրուար 18, 1980 թուակիր ձեր նամակով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 14ին գումարուած ժական ժողովին մէջ կատարուած է ժական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Սկեղեղեղեղ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ճորժ Մարիֆեան
Լէնի Մուրաթեան
Փայլակ Գօղոսեան
Ճէք Գորգոյեան

Քիւ 26848
Ապրիլ 29, 1980

Հոգեշնորհ
Տ. Սուրեն Վրդ. Չինչինեան
Հովիւ Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Նախագահ Ժեսկան Խորհուրդի
Պէլվիլ.

Սիրելի Հայր Սուրեն,

Այսու գիրով կը տեղեկացնենք որ ձեզ կը նշանակենք Պինկամթըն
Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ:

Մեր յանձնարարութիւնն է որ Պէլվիլի Ս. Շողակաթ Եկեղեցւոյ մէջ
ձեր հրաժեշտի Ս. Գառաբազը մատուցանէք Կիրակի Մայիս 11, 1980ին, եւ
ապա կարգադրութիւնները տեսնէք տեղափոխուելու համար Պինկամթըն:

Այս առթիւ կը փափարինք մեր գնահատները յայտնել ձեզի՝ Պէլվիլի
մեր համայնքին մէջ ձեր կատարած օգտակար աշխատանքին համար, եւ մենք
վստահ ենք որ Ժեսկան Խորհուրդդ պատշաճ կարգադրութիւն պիտի ընէ ձեր
հրաժեշտի Գառաբազին եւ ողջերթի ընդունելութեան կապակցութեամբ:

Պէլվիլի մեր համայնքին համար նոր հովիւ մը նշանակելու հարցով
մենք պիտի հաղորդակցինք Ժեսկան Խորհուրդիդ հետ՝ յուսաւով անհրաժեշտ
նշանակումը կատարել պատշաճ ժամանակին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 27268

Ապրիլ 10, 1981

Մեծայարգ
Տիար Լենի Մուրաեան
Ս. Եղալաթ Եկեղեցւոյ
Ժական Խորհուրդի Ասենապետ
Գէլվիլ.

Յարգելի Տիար Մուրաեան,

Ստացած ենք Մարտ 25, 1981 թուակիր համայնքիդ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Մարտ 8ին գումարուած ժական ժողովին մէջ կատարուած է ժական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ժական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակեալ ապագրեալ տեղեկագիրը՝ ամփոփացնելէ եւ նշուած տեղերը ստորագրել առէ՛ք ետք:

Օրհնելով ժական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ՔՐԴԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՂՈՍ

Առաջնորդ

Հրանդ Նորսիկեան
Լուս Լիփ
Ալեքս Գեորգեան

Թիւ 27190
Ապրիլ 80, 1982

Մեծայարգ
Տիար Լէն Մուրադեան
Ս. Շողակաթ Նկեղեցւոյ
Ժաւան Խորհուրդի Մանապետ
Քէլփիւ:

Յարգելի Տիար Մուրադեան,

Այսօր, Ապրիլ 80, ստացանք տեղեկագիրները համայնքի ժաւան ժողովին որ գումարուած է Մարտ 14, 1982ին:

Այսու գիրով կը փութացնենք ժաւան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժաւան Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք ժաւան Խորհուրդի նոր կազմը եւ անոր անդամներուն կը մաղթենք յաջող եւ տրդիւնաւոր գործունէութեան սարի մը:

Սիրոյ ողջունիւ:

ԹԱՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Փայլակ Գողոսեան
Բանախի Հիֆնըր
Ճորճ Սարիֆեան
Լէն Մուրադեան

Թիւ 28196
Ապրիլ 20, 1988

Մեծայարգ
Տիար ժորժ Մարիֆեան
Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Ժառանգ խորհուրդի Ասենապետ
Պէլվիլ.

Յարգելի Տիար Մարիֆեան,

Ստացած ենք տեղեկագիրները համայնքիդ ժառանգ ժողովին, որ զուարուած
է Փետրուար 27, 1988ին:

Այսու գիրով կը վաւերացնենք ժառանգ խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժառանգ խորհուրդի նորընտիր դիւա-
նի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնը թիւերը, ինչպէս նաեւ Առաջ-
նորդարանի վարիչ Տիար ֆրանս Աւագեան-Սթոնսընի մարտ 29, 1988 թուակիր նա-
մակով խնդրուած տեղեկութիւններն ու պաշտօնաթուղթերը:

Կ'օրհնենք ժառանգ խորհուրդի նոր կազմը եւ կը մաղթենք յաջող ու արդիւ-
նաւոր գործունէութեան տարի մը՝ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգե-
ւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Զարլի Մերգեան
Դարլօթ Թաղոսեան
Հէնրի Ներսէսեան



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28610

Ապրիլ 20, 1984

Մեծայարգ

Տիար Հարլզ Մերգեան

Ս. Շողակաթ Եկեղեցւոյ

Ժխական Խորհուրդի Ատենապետ

Պելվիլ.

Յարգելի Տիար Մերգեան

Ստացած ենք Եկեղեցւոյդ տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Փետրուար 26ին գումարուած. համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Բանտի Հիֆները

Ժորժ Մարիֆեան

Լէն Մուրատեան

Հրանդ Նորսիկեան

թիւ 29192
Յունուար 29, 1986

Հոգեշնորհ
Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան
Հովիւ Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Պէլվիլ.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք Յունուար 12, 1986 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկագրէք Մէմֆիս ձեր այցելութեան մասին:

Ուրախ ենք որ ձեր այս այցելութիւնը յաջող անցած է եւ ձեր կատարած կրօնական պաշտամունքին մեծ թիւով հաւատացեալներ ներկայ զանուած են:

Մէմֆիսի շրջանը կազմակերպման կարիքը ունի: Ուրախ պիտի ըլլանք եթէ ձեր թելադրութիւնները ընէք մեզի այս կապակցութեամբ:

Կարելի՞ է կազմել ցանկը շրջանի հայութեան՝ հասցէներով միասին, որպէս զի որեւէ հաւաքոյթի մասին տեղեկացուի բոլորին:

Շնորհակալութեամբ ստացած ենք նաեւ Սարգիս Քիշի 500 --հինգ հարիւր-- տոլարի նուիրատուութիւնը:

Լաւ կ'ըլլայ եթէ Ս. Զատիկին առթիւ եւս Ս. Գասպարազ մատուցուի Մէմֆիսի հայութեան համար:

Կը զնահատենք ձեր կատարած աշխատանքը եւ ձեզի կը մաղթենք տառել քաջաոգոջութիւն ու յաջողութիւն:


Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԱՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

P.O. BOX 1187 + 400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-233-9453



DR. BENJAMIN CHINCHIAN, PASTOR

18 Ապրիլ, 1986.

Բարձրաշնորհ
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ընդունեցանք Ձեր Մարտ 20, 1986 թուակիր նամակը որով բարեհաճած էիք վաւերացնել Միական Խորհուրդիս Հորս նորընտիր անդամները:

Մեր նախագահութեամբ Ապրիլ 14ին գումարուած ժողովի ընթացքին կատարուեցաւ նաեւ Դիւանի ընտրութիւնը նորընտիր Միական Խորհուրդին:

Այսու կը նեկայացնենք դիւանի ընդհանուր կազմը. իսկ հասցէները արդեն ծանօթ են Ձեզի անցեալէն ու կը մնան անփոփոխ:

✓ Լէն Մուրատեան, Ատենապետ.
Զարլզ Մէրզեան, Փոխ Ա. պետ.
Հրանտ Նորսիկեան, Փոխ Ա. պետ.
Ճորճ Մարիմեան, Քարտուղար.
Արչի Պէրպէրեան, Փոխ Քարտուղար.

Հէնրի Ներսէսեան, Գանձապահ.
Ալէքս Պետրոսեան, Փոխ Գանձապահ.
Ռան Լիփ, Խորհրդական.
Տիքսի Սիմոնեան, Խորհրդական.

Հայցելով Ձեր Օրհնութիւնը, կը մատչիմք ի համբոյր Սրբազանութեանդ Ս. Աջոյն խորին յարգանքք:

Շնորհք Մ. Վրդ. Գասպարեան
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29895

Օգոստոս 19, 1986

Հոգեշնորհ

Տ. Շնորհք Ժ. Վրդ. Գասպարեան
Հովիւ Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Պէլվիլ.

Սիրելի Հայր Շնորհք,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր Եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք ձեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն ``վկայութիւն տալու`` նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, քացի երգեցիկ դասին անդամութենէն եւ Հին Կտակարանի եւ Առաքելոց Թուղթերու ընթերցողութենէն:

Կ'ազդարարենք ձեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով ձեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ'աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ Եկեղեցւոյ սպասաւորները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

թիւ 299949

Սեպտեմբեր 22, 1986

Նորին Սուրբ Օծուքին
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Պէլվիլ Իլլինոյի Ս. Շողակաթ սկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Շնորհ Ե.
վրդ. Գապարեանի քահանայ ձեռնադրութեան 25-ամեակն է այս օրը:

Հայր Շնորհ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1961 թուականին, Գահի-
րէի մէջ, Տ. Մամբրէ Արք. Սիրունեանի ձեռամբ: Նախ քան ձեռնադրութիւնը, որ-
պէս ազատ ուսանող հետեւած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց դպրեմանքի ընծայա-
րանի դասընթացքներուն եւ ուսուցչական պաշտօն վարած է Թարգմանչաց Կործարա-
նին մէջ:

Սղած է հովիւ Սան Ժաւլոյի եւ Ուրուկուայի հայ համայնքներուն: Միացեալ
Նահանգաց մէջ վարած է հովուութեան պաշտօն Ուեսթ Ալիսի Ս. Յովհաննէս Մկրտիչ
սկեղեցւոյ, Ուսարի Ս. Փրկիչ սկեղեցւոյ եւ որպէս Առաջնորդի Փոխանորդ Մինթ-
րէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ սկեղեցւոյ համայնքներուն մէջ:

Երջան մը պաշտօնավարած է էջմիածնի հոգեւոր մեմարանին եւ Թուրքիոյ
Հայոց Պատրիարքարանին մէջ:

Շնորհակալ պիտի ըլլանք եթէ Ձերդ Սրբութիւնը խորի ըլլայ Օրհնութեան Գի-
րով մը զնահասել Հայր Շնորհի 25 ամրինելու ծառայութիւնը:

Մաաշիմք ի համբոյր Վեհիդ Օծանէ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30160

Մարտ 17, 1987

Հոգեւոր

Տ. Շնորհ ծ. վրդ. Գասպարեան

Հովիւ Ս. Շողակաթ եկեղեցւոյ

Նախագահ ծխական խորհուրդի

Պեւովիւ.

Սիրելի Հայր Շնորհ,

Ստացած ենք փետրուար 1, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ փետրուար 22ին գումարուած համայնքի ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուհարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր ղեկանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Հէնրի Ներսէսեան

Զարլի Մերգեան

Ալեքս Պետրոսեան


Ռան Լիփ

Ժէք Գորգոյեան

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN

8 ԱՊՐԻԼ, 1987.

Բարձրաշնորհ
Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ներկայիւս կուգամ յայտնել Միական Խորհուրդի եւ իմ
անունով, խորին շնորհակալութիւններ Զեր 17 Մարտ 1987 Թուակիր
Նամակի համար, որով կը վաւերացնէիք ընտրութիւնը Միական Խորհուրդի
հինգ անդամներուն:

Այժմ Զերդ Սրբազնութեան կը ներկայացնենք նորընտիր
Դիւանի կազմը որ տեղի ունեցաւ Միական Խորհուրդի նախորդ հերթական
ժողովի ընթացքին: Հասցէները ըստ անցեալին կը մնան անփոփոխ:

ձորճ Մարիմեան, Ատենապետ.
Զարլի Մերգեան, Փոխ Ա.պետ.
Հրանդ Նորսիկեան, Զարտուղար.
Հէնրի Ներսէսեան, Գանձապահ.
Ալէքս Պետրոսեան, Փոխ Գանձապահ.

Արշի Պէրպէրեան, Խորհրդական
Էլէն Մուրատեան, ,,
Ճէք Գորգոյեան, ,,
Ռան Լիփ, ,,

Հայցելով Զեր օրհնութիւնները, մատչիմք ի համբոյր
Սրբազնութեանդ Ս. Աշոյն.

Զերդ խորին յարգանք,

Շնորհք Մ.Վրդ. Գասպարեան
ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30427

Մայիս 4, 1988

Հոգեշնորհ
Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան
Հովի Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
ՊԵՂՎԻԼ.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք Մարտ 21, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Մարտ 20ին գումարուած համայնքի Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ


ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Լէն Մուրատեան
Հրանդ Նորսիկեան
Զարուհի Նորսիկեան
Փիթըր Մերգեան

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN

19 Մայիս, 1988

Mailed 3 June 88

Rec. 7 June 88

Բարձրաշնորհ
Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք.

Գերաշնորհ Արքազան Հայր,

Խորին շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր 4 Մայիս 1988

Թուակիրը, որով կը վաւերացնէիք ընտրութիւնը Միական Խորհուրդի

նոր անդամներուն: Ներկայիս կուգամ հաղործել Ձերդ Արքազնութեան

նորընտիր Դիւանի կազմը: Հասցեները նոյնն են ըստ անցեալին:

Հրանդ Նորսիկեան, Ատենապետ.

Զարլի Մերզեան, Փոխ Ա.պետ

Ռան Լիփ, Բարտուղար.

Հէնրի Ներսէսեան, Գանձապահ

Ալէքս Պետրոսեան, Փոխ Գանձապահ.

Լէն Մուրատեան, Խորհրդական

Զարուհի Նորսիկեան, ,,

Փիթըր Մերզեան, ,,

Ճաք Գորգոյեան, ,,

Հայցելով Ձեր օրհնութիւնները, մատչիմք ի համբոյր

Արքազնութեանդ Ս. Աջոյն:


Ձերդ խորին յարգանք,

Մտորհք Մ.Վրդ. Գասպարեան
Հոգեւոր Հովիւ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN

21 Մարտ, 1988.

Բարձրաշնորհ
Տ.Թորգոմ Ա.Արք.Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մուսիս երկրորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ
Կիրակի 20 Մարտ 1988 եւ հիմնուելով Սրբազանութեանդ Մարտ 3, 1988
Թուակիր նամակին բարեհաճ տնօրինութեան, կատարեցինք ընտրութիւնը
Ծխական Խորհուրդի չորս անդամներու, որուն արդիւնքը կը փութամ
հաղորդել.- Էէն Մուրատեան 25 քուէ, Հրանդ Նորսիկեան 25 քուէ,
Ջարուհի Նորսիկեան 25 քուէ եւ Բիթըր Մերգեան 25 քուէ.

Ջայս հաղորդելով Ձերդ Սրբազանութեան, կը խնդրենք որ
բարեհաճիք վաւերացնել այս ընտրութիւնը որպէսզի կարենանք Դիւանի
ընտրութիւնը կատարել:

Կանխապաշտ շնորհակալութեամբ եւ յարգանք մատչիմ ի
համբոյր Ձեր Սուրբ Աջոյն:

Շնորհք Մ.Վրդ.Գասպարեան
ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻ

Ս. ՇՈՂԱԿԱԹ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ


ԵԿԵՂԵՑԻ

Հովիտ՝ Տ. ՇՆՈՐԿ Ծ. Վրդ. Գառապարեան

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN, PASTOR

7 Յունիս, 1989.

Բարձրաշնորհ
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին
Նիւ Շորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր Մայիս 12 Թուակիր նամակը
որով կը վաւերացնէիք Միական Խորհուրդի երեք նորընտիր անդամներու
ընտրութիւնը:

Ներկայիւս կ'ուզամ հաղորդել Ձերդ Սրբազանութեան Միական
Խորհուրդի նորընտիր Դիւանի կազմը որ կատարուեցաւ երկկիւղիկ
հերթական ժողովի ընթացքին:

Հրանդ Նորսիկեան, Ատենապետ
Լէն Մուրատեան, Փոխ Ատենապետ
Ճէյն Մաթոսեան, Քարտուղարուհի
Փիթըր Մէրզեան, Գանձապահ
Հրանդ Նորսիկեան Կրտ., Փոխ Գանձապահ
Տիքսի Սիմոնեան, Խորհրդական
Ջարուհի Նորսիկեան, Խորհրդական

Հայցելով Ձեր օրհնութիւնները, մատչիմք ի համբոյր Սրբազանու-
թեանդ Ս. Աջոյն:

Ձերդ խորին յարգանք

Շնորհք Ծ. Վրդ. Գառապարեան
Հոգեւոր Հովիտ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30838

Մայիս 12, 1989

Հոգեշնորհ

Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան

Հովիւ Ս. Ծողակաթ Եկեղեցւոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Պէլվիւ.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք Եկեղեցւոյ տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Մարտ 5-ին գումարուած համայնքի Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւնատու գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ծէյն Մաթոսեան

Հրանդ Նորսիկեան Կրտ.

Տիքսի Սիմոնեան